**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

---

ք. Երևան 26.02.2021թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
## թիվ ՍՑ-LO-2021/22

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամ
Մասնակից՝ «Արման Սվազյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
«Արման Սվազյան» Ա/Ձ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթ, սննդի պատրաստման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 27.01.2021թ.-ի թիվ 26/26/1042-2021 գրությամբ «Արման Սվազյան» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

# ՊԱՐԶԵՑ

**1. <u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի 18.01.2021թ. թիվ 645/1 գրության հիման վրա, 27.01.2021թ.-ին «Արման Սվազյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 27.01.2021թ.-ին:

29.01.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/22 համարի ծածկագիրը:

04.02.2021թ.-ին, 11.02.2021թ.-ին և 26.02.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 11.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.02.2021թ.-ին:

**2. <u>«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամը 18.01.2021թ. թիվ 645/1 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

*«Հայտնում եմ Ձեզ, որ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կարիքների համար անհրաժեշտ Սննդի պատրաստման ծառայությունների ձեռքբերման համար կազմակերպված ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով կազմակերպված բաց մրցույթի ընտրված մասնակից՝ «Արման Սվազյան» Ա/Ձ-ն հրաժարվել է պայմանագիրը կնքելուց: Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի*

*6-րդ մասի բ. Պարբերությունը՝ «որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց», որոշեց մերժել «Արման Սվազյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը: Քանի որ ի հայտ են եկել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը, ուստի Ձեզ ենք ներկայացնում «Արման Սվազյան» Ա/Ձ-ի փվյալները և ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/1 ծածկագրով գնման ընթացակարգի արձանագրությունները:»:*

Պատվիրատուն 12.02.2021թ.-ի թիվ 659/1 գրությամբ հայտնել է հետևյալը.

*«Արման Սվազյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԱՕ-2021/22 ընթացակարգի վերաբերյալ, հայտնում եմ, որ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմանդրամի /այսուհետև՝ պատվիրատու/ կարիքների համար սննդի ծառայությունների մատուցման ձեռք բերման նպատակով կազմակերպած ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/1 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցել է նաև «Արման Սվազյան» Ա/Ձ-ն: 08.12.2020թ.-ին վերջինս գնահատող հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել է ընտրված մասնակից: Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում «Արման Սվազյան» Ա/Ձ-ին է ներկայացվել պայմանագիր կնքելու առաջարկ և տրամադրվել է պայմանագրի համապատասխան նախագիծ:*

*Համաձայն ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների՝ «Արման Սվազյան» Ա/Ձ-ն, ներառյալ 08.01.2021 թվականի ժամը 18.00-ն պետք է որակավորման ապահովումները և իր կողմից հաստատված պայմանագրի 2 օրինակը գրությամբ ներկայացներ պատվիրատուին, սակայն նշված ժամկետում «Արման Սվազյան» Ա/Ձ-ի կողմից ոչինչ չի ներկայացվել:*

*11.01.2021 թվականին հրավիրվել է գնահատող հանձնաժողովի նիստ և որոշում է կայացվել մերժել «Արման Սվազյան» Ա/Ձ-ին և ընտրված մասնաից ճանաչել հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:*

*12.01.2021 թվականին Դիլիջան քաղաքի «Հայփոստ» ՓԲԸ-ի բաժանմունքից տեղեկացրել են, որ «Արման Սվազյան» Ա/Ձ-ից պատվիրատուին հասցեագրված առաքանի կա: Ուսումնասիրելով ներկայացված ծրարում առկա փաստաթղթերը՝ պարզվել է, որ «Արման Սվազյան» Ա/Ձ-ի կողմից պայմանագիր կնքելու ծանուցման գրությամբ նախատեսված փաստաթղթերը ներկայացված են ոչ ամբողջական /անհրաժեշտության դեպքում կարող ենք ներկայացնել բացակայող փաստաթղթերի ցանկը/: Այդ իսկ պատճառով հանձնաժողովի արտահերթ նիստ չի հրավիրվել և «Արման Սվազյան» Ա/Ձ-ին մերժելու որոշումը չի փոփոխվել:*

Ի լրումն վերոնշյալ գրության, Պատվիրատուն 23.02.2021թ.-ի թիվ 661/1 գրությամբ հայտնել է նաև հետևյալը.

*«Ի լրումն փետրվարի 16-ին ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված դիրքորոշման, ներկայացնում եմ «Արման Սվազյան» Ա/Ձ-ի կողմից՝ 12.01.2021 թվականին ստացված ծրարում առկա փաստաթղթերը և բացակայող փաստաթղթերի ցանկը:*

*12.01.2021 թվականին «Արման Սվազյան» Ա/Ձ-ի կողմից ստացված ծրարում առկա չեն եղել հետևյալ փաստաթղթերը՝*

*1. ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի նախագծի ընդհանուր գումարի 10%-ի չափով փուժանքի ձևով պայմանագրի կատարման ապահովումը,*

*2. ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի նախագծի ընդհանուր գումարի 100%-ի չափով փուժանքի ձևով որակավորման ապահովումը,*

*3. Հաստատված պայմանագրի նախագծի ներկայացման գրությունը:*

*12.01.2021 թվականին ստացված ծրարում առկա է եղել միայն հաստատված պայմանագրի նախագիծը (կից Ներկայացվում է բնօրինակից արտատպված տարբերակը:»:*

**3. <u>«Արման Սվազյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 29.01.2021թ.-ին գրությամբ դիմել է «Արման Սվազյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.01.2021թ.-ի թիվ 26/26/1042-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Ներկայացնելով գրավոր դիրքորոշում Մասնակիցը հայտնել է հետևյալը.

*««Արման Սվազյան» Ա/Ձ-ն մասնակցության հայտ է ներկայացրել «Մոնթե Մելքոնյան անվան ռազմամարզական վարժարան հիմնադրամ»-ի կարիքների համար հայտարարված «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթին /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/:*

*Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.12.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության՝ Արման Սվազյան Ա/Ձ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և նույն*

*արձանագրությամբ որոշել՝ անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:*

*Արման Սվազյան Ա/Ձ-ին պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ուղարկվել է 17.12.2020թ., համապատասխանաբար վերջնաժամկետ է սահմանվել 08.01.2021թ. ներառյալ (արտատպումը կցվում է):*

*Արման Սվազյան Ա/Ձ-ն 08.01.2021թ.՝ փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին /համապատասխան ապացույցը կցվում է/:*

*Մինչդեռ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրություն համաձայն՝ Արման Սվազյան Ա/Ձ-ի հայտը մերժվել է, քանի որ վերջինս հրաժարվել է պայմանագիր կնքելուց /ըստ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրության/:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝*

*ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակ-ցության դադարեցմանը:*

*բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:*

*Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:*

*ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում.*

*«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ … մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված»:*

*Ինչպես արդեն հայտնել ենք, Արման Սվազյան Ա/Ձ-ն մասնակցության հայտ է ներկայացրել «Մոնթե Մելքոնյան անվան ռազմամարզական վարժարան հիմնադրամ»-ի կարիքների համար հայտարարված «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթին և ճանաչվել է ընտրված մասնակից, իսկ նույն արձանագրությամբ որոշել՝ անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:*

*Արման Սվազյան Ա/Ձ-ին պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ուղարկվել է 17.12.2020թ., համապատասխանաբար վերջնաժամկետ է սահմանվել 08.01.2021թ.:*

*Սակայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրություն համաձայն՝ Արման Սվազյան Ա/Ձ-ի հայտը մերժվել է, քանի որ վերջինս հրաժարվել է պայմանագիր կնքելուց /ըստ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրության/:*

*Եվ այսպես, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա, այն է.*

*Այսպիսով, Արման Սվազյան Ա/Ձ-ն, խստիվ պահպանելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 08.01.2021թ. ներառյալ), այն է նույն՝ 08.01.2021թ.՝ փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը օրենքով սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին /համապատասխան ապացույցը կցվում է/, սակայն գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ Արման Սվազյան Ա/Ձ-ն հրաժարվել է պայմանագիր կնքելուց, այն հիմքով, որ Արման Սվազյան Ա/Ձ-ն սահմանված ժամկետում կնքված պայմանագիրը չի ներկայացրել:*

*Հատկանշական է այն փաստը, որ 08.01.2021թ. «ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ-ի միջոցով Պատվիրատուին է ուղարկել կնքված պայմանագիրը՝ ինչն էլ ապացուցում է այն հանգամանքը, որ Արման Սվազյան Ա/Ձ-ն չի հրաժարվել պայմանագիր կնքելուց, ավելին, օրենքով թույլատրելի եղանակով Ընկերությունը ստորագրված պայմանագիրը ներկայացրել է պատվիրատուին, սակայն պատվիրատուն անտեսելով վերոհիշյալը՝ որոշել է զրկել Արման*

*Սվազյան Ա/Ձ-ին գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված պայմանագիր կնքելու իրավունքից*

*Մինչդեռ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ... մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված?: Իսկ ինչպես արդեն նշել ենք, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, պետք է ստորագրի և պատվիրատուին ներկայացնի այդ պայմանագիրը, ինչը տվյալ դեպքում կատարել է:*

*Գտնում ենք, որ նման փաստական հանգամանքներում Արման Սվազյան Ա/Ձ-ին չի կարող վերագրվել պայմանագրից կնքելու հրաժարում, քանի որ, ինչպես արդեն նշվել է, 08.01.2021թ. «ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ-ի միջոցով Պատվիրատուին է ուղարկել կնքված պայմանագիրը:»:*

**4. <u>ՍՑ-LO-2021/22 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից սննդի պատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով 06.11.2020թ.-ին հայտարարվել է «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Մրցույթին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Արման Սվազյան» Ա/Ձ-ն:

iii. «Արման Սվազյան» Ա/Ձ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթի գնմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 08.12.2020թ.-ին կայացված նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Արման Սվազյան» Ա/Ձ-ին:

v. 11.12.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և անգործության ժամկետ է սահմանվել 5 օրացույցային օր:

vi. Պատվիրատուն 17.12.2020թ.-ին գրությամբ Մասնակցին ներկայացրել է «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը:

vii. Սույն գործում առկա՝ Մասնակցի կողմից տրամադրված փոստային կտրոնի /առաքանի՝ թիվ 5, կոդը՝ RR290903775/ համաձայն՝ «Արման Սվազյան» Ա/Ձ-ն 08.01.2021թ.-ին պատվիրված նամակով «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ուղարկել է առաքանի:

viii. www.haypost.am կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ փոստային կտրոնի /առաքանի՝ թիվ 5, կոդը՝ RR290903775/ համաձայն՝ առաքանին հանձնվել է հասցեատիրոջը՝ 12.01.2021թ.-ին:

ix. Հանձնաժողովի 11.01.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Մասնակցի կողմից, մինչև 08.01.2021թ.-ը, սահմանված ժամկետում չի ներկայացվել հաստատված պայմանագիրը, ուստի որոշում է կայացվել «Արման Սվազյան» Ա/Ձ-ի հայտը մերժել՝ հիմք ընդունելով հրավերի 8.20 կետը:

x. Պատվիրատուն 12.02.2021թ.-ին ներկայացված թիվ 659/1 գրությամբ հաստատել է, որ 12.01.2021թ.-ին ստացել է «Արման Սվազյան» Ա/Ձ-ի կողմից ուղարկված ստորագրված և կնքված պայմանագրի բնօրինակը: Միաժամանակ հայտնել է, որ ծրարում բացակայել են՝

1. «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի նախագծի ընդհանուր գումարի 10%-ի չափով տուժանքի ձևով պայմանագրի կատարման ապահովումը,

2. «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի նախագծի ընդհանուր գումարի 100%-ի չափով տուժանքի ձևով որակավորման ապահովումը,

3. Հաստատված պայմանագրի նախագծի ներկայացման գրությունը:

**5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.01.2021թ.-ի թիվ 26/26/1042-2021 գրությամբ «Արման Սվազյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք

պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի

ժամկետով, քանի որ իր գործողություններով (անգործությամբ) պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կողմից սննդի պատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով 06.11.2020թ.-ին հայտարարված «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Արման Սվազյան» Ա/Ձ-ն Հանձնաժողովի 08.12.2020թ.-ին կայացված նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից, ինչով պայմանավորված 11.12.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և անգործության ժամկետ է սահմանվել 5 օրացույցային օր, ինչից հետո Պատվիրատուն 17.12.2020թ.-ին գրությամբ Մասնակցին ներկայացրել է «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը: Հանձնաժողովի 11.01.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Մասնակիցը կողմից, մինչև 08.01.2021թ.-ը, սահմանված ժամկետում չի ներկայացվել հաստատված պայմանագիրը, ուստի որոշում է կայացվել «Արման Սվազյան» Ա/Ձ-ի հայտը մերժել՝ հիմք ընդունելով հրավերի 8.20 կետը:

Սույն գործում առկա՝ Մասնակցի կողմից տրամադրված փոստային կտրոնի /առաքանի՝ թիվ 5, կոդը՝ RR290903775/ համաձայն՝ «Արման Սվազյան» Ա/Ձ-ն 08.01.2021թ.-ին պատվիրված նամակով «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ուղարկել է առաքանի: www.haypost.am կայքի ուսունասիրության արդյունքում պարզվել է, որ փոստային կտրոնի /առաքանի՝ թիվ 5, կոդը՝ RR290903775/ համաձայն՝ առաքանին հանձնվել է հասցեատիրոջը՝ 12.01.2021թ.-ին:

Պատվիրատուն 12.02.2021թ.-ին ներկայացված թիվ 659/1 գրությամբ հաստատել է, որ 12.01.2021թ.-ին ստացել է «Արման Սվազյան» Ա/Ձ-ի կողմից ուղարկված ստորագրված և կնքված պայմանագրի բնօրինակը: Միաժամանակ հայտնել է, որ ծրարում բացակայել են՝

1. «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի նախագծի ընդհանուր գումարի 10%-ի չափով տուժանքի ձևով պայմանագրի կատարման ապահովումը,

2. «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի նախագծի ընդհանուր գումարի 100%-ի չափով տուժանքի ձևով որակավորման ապահովումը,

3. Հաստատված պայմանագրի նախագծի ներկայացման գրությունը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս գալ այն եզրահանգման, որ «Արման Սվազյան» Ա/Ձ-ն, հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ 17.12.2020թ.-ին, էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, որպես ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ 08.01.2021թ.-ին, կապի կազմակերպությանն է հանձնել պահանջված փաստաթղթերը, որը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով համարվում է ժամկետում հանձնված:

Ընդ որում, հարկ է նկատել, որ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամը Կարգի 45-րդ կետի հիմքով ՀՀ ֆինանսների նախարարությանն է դիմել 18.01.2021թ. թիվ 645/1 գրությամբ, այն դեպքում, երբ 12.02.2021թ.-ին ներկայացված թիվ 659/1 գրությամբ Պատվիրատուն հավաստել է, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը փոստի միջոցով 12.01.2021թ.-ին ստացել է «Արման Սվազյան» Ա/Ձ-ի կողմից ուղարկված իր կողմից ստորագրված և կնքված պայմանագրի բնօրինակ:

Ամբողջացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պատվիրատուն կարող էր Կարգի 45-րդ կետով սահմանված ու իր վրա դրված պարտավորությունը կատարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների հաշվառմամբ, որի արդյունքում 12.01.2021թ.-ին ստանալով «Արման Սվազյան» Ա/Ձ-ի կողմից ուղարկված իր կողմից ստորագրված և կնքված պայմանագրի բնօրինակը կհամարվեր ժամկետում ներկայացված, ուստի և պայմանագիրը կնքված:

Ինչ վերաբերում է Մասնակցի կողմից «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի նախագծի ընդհանուր գումարի տուժանքի ձևով 10%-ի չափով պայմանագրի կատարման և 100%-ի չափով որակավորման ապահովումները չներկայացնելուն, ապա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովի քարտուղարի կողմից 17.12.2020թ.-ին գրությամբ Մասնակցին ներկայացրել է «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը, իսկ տուժանքի

ձևով պայմանագրի կատարման և որակավորման ապահովումներ ներկայացնելու պահանջ չի ներկայացվել, ուստի այս պարագայում, Մասնակցի կողմից վերոնշյալ փաստաթղթեր չներկայացնելը չէր կարող հանգեցնել Պատվիրատուի կողմից պայմանագիր կնքելուց հրաժարվելու հանգամանքով պայմանավորված Մասնակցի հայտի մերժմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արման Սվազյան» Ա/Ձ-ն, որպես ընտրված մասնակից, Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ 08.01.2021թ.-ին, Պատվիրատուին ներկայացրել է պայմանագիրը, որպիսի պայմաններում Մասնակիցը չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

**Ո Ր Ո Շ Ե Ց**

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.01.2021թ.-ի թիվ 26/26/1042-2021 գրությամբ «Արման Սվազյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/22 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**